Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԳՏ պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 5**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 4. Գեղարքունիքի մարզ–ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ.. |
| Ներկայացման օր | 10.01.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 46 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 11 դեպքի վարում (ֆինանսական աջակցության տրամադրման կազմակերպում, նոր անձնագրի ձեռքբերման կազմակերպում. մարզպետարանի և համայնքապետարանի կողմից ֆինանսական աջակցության տրամադրման կազմակերպում. առողջական վիճակի բարելավման համար համապատասխան բժշկական միջամտությունների կազմակերպում, վերափաստագրման կազմակերպում), 7 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Հոգեբանական աջակցության շրջանակներում հոգեբանի կողմից հաշվետու ժամանակահատվածում 34 շահառուի տրամադրվել է անհատական խորհրդատվություն: Համապատասխան մասնագիտական աշխատանք է տարվել Արցախից տեղահանված տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային կենտրոնում ընդգրկման և նրանց ինտեգրման նպատակով:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 4 խմբակ՝ երգ-երաժշտության, գրական. տեղեկատվական, ձեռագործության և շուղագործության, որին մասնակցել է 46 շահառու:
  Կազմակերպվել է թվով 22 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 46 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ Սուրբ Հարության կամ Զատկի տոն, ՀՀ բանակի կազմավորման օր. Բարեկենդան, Տեառնընդառաջ, Հովհաննես Թումանյանի ծննդյան եվ գիրք նվիրելու օր. Հայրենիքի պաշտպանի օր. Կանանց միջազգային օր. Ծաղկազարդի տոն, շահառուների ծննդյան տարեդարձերի նշում (երկու անգամ), Մայրության եւ գեղեցկության տոն. Հայոց մեծ եղեռնին նվիրված միջոցառում, Հաղթանակի օր. Հայկական առաջին

հանրապետության օր, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Տարեցների միջազգային օր. Աշնանը նվիրված միջոցառում, Մշակութային միջոցառում Երաժշտական դպրոցում. Ղափամայի պատրաստում, Երկրաշարժի զոհերի հիշատակում, Ամանոր:

- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 50 հանդիպում՝ ուղղված մանր մոտորիկայի զարգացմանը, խմբային ինտեգրմանը, խմբային աշխատանքի հմտությունների ձեռքբերմանը, հաղորդակցման հմտությունների զարգացմանը, որին մասնակցել է 46 շահառու:
- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- Թվով 3 շահառու օգտվել է լվացքի ծառայության տրամադրումից:
- Կազմակերպվել է երեք շահառուի հանգիստը «Ոսկե սերունդ» ճամբարում:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Վարսավիրական ծառայությունների մատուցում Սևանի կենտրոնի շահառուներին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/uhqqy),
- Կանանց տոնին նվիրված միջոցառումը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/mpusdd),
- Տարեցների օրը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/webdql),
- Անվճար վարսավիրական ծառայությունների մատուցում շահառուներին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/aawmtf),
- Կարի խմբակը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/zbaael),
- Երգի խմբակը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/oxkddd),
- Հոգեբանական խմբային աշխատանքը (տե՛ս հետևյալ հղմամ՝ http://surl.li/tlpwnz),
- Աշնանը նվիրված միջոցառումը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/bwfxfo),
- Ղափամայի պատրաստում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/xksljz),
- Ամանորյա միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/cxwkbt):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային խնամքի ծառայություն տրամադրող բոլոր աշխատակիցները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ՀԿ կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված թիմ բիլդինգին՝ ուղղված Կազմակերպության ողջ անձնակազմի թիմային ոգու բարձրացմանը, փորձի փոխանակմանը:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 44/42 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 28 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 8 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 6 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 7 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 35 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 29 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 35 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 46 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 46 |
| 5.1 | երգ-երաժշտության | 19 |
| 5.2 | գրական | 20 |
| 5.3 | ասմունք | 12 |
| 5.4 | տեղեկատվական | 25 |
| 5.5 | ձեռագործության և ջուլհագործության | 9 |
| 6 | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 50 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 19 |
| 7. | Այլ ծառայություն (նշել)<br>Անհատական հոգեբանական խորհրդատվություն<br>Լվացքի ծառայություն | <br>34<br>2 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Ե.Մխիթարյան «30» դեկտեմբեր. 2024թ